



Հայաստանի կենսաբ. հանդես, 4 (72), 2020

ԾԱՌԱԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՐՏԻԶԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ԲԱԶՄԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՄԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մ.Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱՄ Ա. Թախտաջյանի անվ. բուսաբանության ինստիտուտ
manikg@mail.ru

Ներմուծված բարձր գեղագարդ ծառաբույսերի պարտիզային ձևերի բազմացմանը նվիրված նպատակային ուսումնասիրություններ են իրականացվել Երևանի բուսաբանական այգու պայմաններում՝ դրանց հավաքածուն համալրելու և հարստացնելու նպատակով:

Բացահայտվել է, որ պարտիզային ձևերի բազմացումն ավելի արդյունավետ է կտրոնավորման դեպքում, որի ժամանակ դրանց արմատակալումը տատանվում է 60-90% -ի սահմաններում: Սերմերով բազմացնելիս 65 անուն պարտիզային ձևերից 27-ը ծլունակ չեն եղել, իսկ մնացած 38-ի ծլունակության ցուցանիշը տատանվում է ավելի լայն ամպլիտուդայով՝ 10-90%:

Ծառաբույս – պարտիզային ձև – բազմացում – պատվաստ – հարմարվողականություն

Проведены целенаправленные исследования, посвященные особенностям размножения садовых интродуцированных древесных растений в условиях Ереванского ботанического сада с целью пополнения их коллекции.

Выявлено, что наиболее эффективным способом размножения садовых форм – черенкование, при котором укоренение колеблется в пределах 60-90 %. При семенном размножении 27 из 65-ти наименований были невосхожими, а у 38 представителей показатели всхожести колебались в широких пределах — 10-90 %.

Древесные растения – садовая форма – размножение – прививка приспособляемость

The targeted research of breeding of high ornamental garden forms of woody plants in conditions of Yerevan Botanical Garden in order to supplement their collection were carried out.

It was found that propagation by cutting is the most effective method of breeding for garden forms, during which the rooting of cuttings fluctuates in the range of 60-90 %. In case of seed reproduction 27 from 65 garden forms were not germinated, and the index of germination with the remaining 38 fluctuates in very wide range – 10-90 %.

Woody plants – garden form – breeding – graft – adaptability

Ներմուծման աշխատանքների կարևոր գործառույթներից է բույսերի աճման ու զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրությունը գոյության նոր պայմաններում՝ նպաստելու դրանց պահպանությանն ու վերարտադրությանը:

Կան ծառաբույսեր, որոնք չեն պտղաբերում, տալիս են ոչ լիարժեք սերմեր, ուչ են մտնում պտղաբերման շրջան, բնութագրվում են սերմերի վատ ծլունակությամբ կամ

անպտուղ են, ունեն սերմերի հանգստի երկարատև ժամանակահատված, ներմուծման արդյունքում ձեռք են բերել նոր արժեքավոր հատկանիշներ, մայր բույսեր, որոնցից կա միայն մեկ օրինակ կամ միասեռ են, նաև պարտիզային ձևեր, որոնց մոտ շատ հաճախ սերմնային բազմացման ժամանակ դիտվում է ճեղքում: Ներմուծման և կլիմայավարժեցման ժամանակ վերը թվարկված բույսերի բազմացումն այլևս խնդիր չէ: Այդ տեսակները շատ հեշտությամբ կարելի է բազմացնել վեգետատիվ եղանակով [9]:

Պարտիզային ձևերն իրենց մորֆոլոգիական առանձնահատկությունների (պսակի, տերևների, ծաղիկների և պտուղների կառուցվածքով, ձևով, չափերով, գույնով և այլն) շնորհիվ մեծ պահանջարկ և կիրառություն ունեն ներկայիս կանաչապատ աշխատանքներում:

Երևանի բուսաբանական այգում, սկսած 1980-ական թվականներից, ծառաբույսերի ներմուծման և էքսպոզիցիոն դենդրոհավաքածուների ստեղծմանը զուգահեռ նպատակային ուսումնասիրություններ են կատարվել նաև պարտիզային ձևերի կենսաէկոլոգիական առանձնահատկությունների և բազմացման հնարավորությունների բացահայտման ուղղությամբ [4, 5, 8]: Արդյունքում պարզվել է, որ պարտիզային ձևերը որպես կանոն բազմանում են վեգետատիվ ճանապարհով (պատվաստ, կտրոնավորում և անղալիս)՝ *Robinia pseudoacacia* "Compacta", *Saphora japonica* "Pendula", *Acer platanoides* "Globosa", *Ulmus foliaca* "Globosa": Դրանց ճնշող մեծամասնությունը (*Robinia pseudoacacia* "Compacta", *Acer palmatum* "Globosa") սովորաբար սերմեր չեն առաջացնում, կամ էլ առաջացած սերմերը կենսունակ չեն (*Picea pungens* "Argentata", *Viburnum opulus* "Roseum", *Thuja occidentalis* "Globosa", *Quercus robur* "Pendula"): Հազվադեպ են սերմերով բազմացող պարտիզային ձևերը (*Cupressus sempervirens* "Stricta", *Quercus robur* "Pyramidalis", *Robinia pseudoacacia* "Pyramidiformis"): Բազմամյա ուսումնասիրություններով բացահայտվել է նաև, որ պարտիզային ձևերի սերմերով բազմացման դեպքում ճեղքում է տեղի ունենում, որի արդյունքում չեն պահպանվում պարտիզային ձևին բնորոշ հատկանիշները: Օրինակ, Թխկի հացենատերև դեղնախայտաբղետի (*Acer negundo* "Aureo-variegata") մոտ սերմերի 90%-ը փուչ են կամ ոչ կենսունակ: Սերմերի ծիլերի 10 %-ն ունեն դեղին կամ կանաչ շաբլիներ: Ծիլերի դեղին շաբլիները որպես կանոն մահանում են, իսկ կանաչներն էլ եթե աճում են, ապա դեղին բծերը բացակայում են: Թխկի կեղծ-սոսիատերև Լեոպոլդի (*Acer pseudoplatanus* "Leopoldii") սերմերի որոշ մասը պահպանում են խայտաբղետությունը, սակայն այս դեպքում էլ աճն է շատ դանդաղ ընթանում [2]:

Կտրոնների արմատակալման արագության վրա ազդող հիմնական գործոններն են՝ կտրոնավորման ժամկետները, մայր բույսի սեռը, միկրոկլիմայական պայմանները, հողային կազմը: Վերը նշված գործոնների ազդեցության համապարփակ ուսումնասիրության արդյունքում, բույսերի ներմուծման հետ կապված չի տալիս հարցերի լուծում մեծապես պարզեցված է:

Նյութ և մեթոդ: Մայր տեսակների համեմատությամբ պարտիզային ձևերն առատ չեն ծաղկում և պտղաբերում, որոշ մասը նույնիսկ պտուղներ չի տալիս: Լիաթերթ ծաղիկներ ունեցող պարտիզային ձևերը, որպես կանոն, սերմեր չեն առաջացնում (սզևի, դեյցիա, սրնգենի, եղրևանի), իսկ գնդաձև սաղարթ ունեցողների մոտ, եթե անգամ սերմատվություն տեղի է ունենում, ապա դրանք կենսունակ չեն լինում (թխկի, թեղի, ռոբինիա կեղծակաղի, սոճի), [1]: Այդ պատճառով էլ հիմնականում բազմանում են վեգետատիվ եղանակով՝ կտրոնավորում և պատվաստ (աչքապատվաստ և կտրոնապատվաստ):

Մեր ուսումնասիրություններում վեգետատիվ բազմացման աշխատանքներ իրականացնելու համար ելակյութ են ծառայել Երևանի բուսաբանական այգու էկոլոգաաշխարհագրական հողամասերից և հարակից կանաչ տարածքներից վերցված գեղազարդ պարտիզային ձևերի կտրոնները և պատվաստի համար անհրաժեշտ պատվաստանյութը: Սերմնային բազմացման համար որպես հումք օգտագործվել են արտերկրից (Գերմանիա, Վրաստան, Միչիգան, Հունգարիա, Լատվիա, Ռուսաստան և այլն) սերմերի փոխանակման ցուցակների միջոցով ստացված և Երևանի բուսաբանական այգուց հավաքված սերմերը:

Կտրոնավորման համար ելակյութ են հետևյալ պարտիզային ձևերը՝ Գիիի չինական խայտաբղետ (*Juniperus chinensis* "Variegata"), Գ. սովորական իռլանդական (*J. communis* "Hibernica"), Գ. կազակական տոճիատերև (*J. sabina* "Cupressifolia"), Թույա արևմտյան բրգաձև (*Thuja occidentalis*)

"Fastigiata"), Կենսածառ արևելյան գնդաձև (*Biota orientalis* "Globosa"), Կծոխուր սովորական կարմրատերև (*Berberis vulgaris* "Atropurpurea"), Կտտկենի սև սպիտակախայտաբղետ (*Sambucus nigra* "Albo-variegata"), Կտտկենի սև կտրտված տերևավոր (*Sambucus nigra* "Laciniata"), Իլենի ճապոնական դեղնախայտաբղետ (*Euonymus japonica* "Aureo-variegata"), Ճապկի սպիտակ սպիտակախայտաբղետ (*Cornus alba* "Argenteo-marginata") և այլն:

Պատվաստման աշխատանքներ կատարվել են հետևյալ ծառաբույսերի մոտ՝ Կարագանա ծառանման լացող (*Caragana arborescens* "pendula"), Ռոբինիա կեղծակաղցիա գնդաձև (*Robinia pseudoacacia* "compacta"), Սզնի միավարսանդ վարդագույն լիթերթ (*Crataegus monogyna* "Flore rosea-plena"), Թթենա սպիտակ լացող (*Morus alba* "Pendula"):

Սերմերով բազմացման փորձերը կատարվել են հետևյալ պարտիզային ձևերի մոտ՝ Թույա արևմտյան լացող (*Thuja occidentalis* "Pendula"), Թ. արևմտյան թելանման (*Thuja occidentalis* "Filiformis"), Կենի հատապտղային Նրբագեղ (*Taxus baccata* "Elegantissima"), Կ. հատապտղային բրդաձև (*T. baccata* "Fastigiata"), Դեյցիա խորդուբորդ վարդագույն մազմուկապատ (*Deutsia scabra* "Plena"), Պիրակակթա վառ կարմիր Նարնջագույն փայլուն (*Pyracantha coccinea* "Orange Glow"), Կծոխուր Տունբերգի Բեյբեթի (*Berberis thunbergii* "Babette"), Կ. Տունբերգի կանաչ գորգ (*B. thunbergii* "Grin Carpet"), Դրախտածառ սովորական կարմրավուն (*Cotinus coggygia* "Purpureus"), Բշտիկապտուղ բուլխատերև դեղնավուն (*Physocarpus opulifolius* "Luteus") և այլն:

Արդյունքներ և քննարկում: Ճառերի ու թփերի ճնշող մեծամասնությունը բազմանում է սերմերով: Այդ ճանապարհով ստեղծված տնկարկներն ավելի դիմացկուն են, երկարակյաց և կենսունակ:

Ճառաբույսերը մինչև հիմնական տնկարկում աճեցնելն անհրաժեշտ է նախօրոք բազմացնել հատուկ հողամասերում, մասնագիտացված տնտեսություններում, որտեղ առկա են կամ ստեղծված են բարենպաստ պայմաններ և ապահովում են բավարար ագրոտեխնիկական միջոցառումներ: Կանաչապատման պրակտիկայում, որպես կանոն օգտագործվում են տնկարանում աճեցված 2-5 (6) տարեկան, հազվադեպ նաև 6-10 (12) տարեկան տնկներ [3]:

Պարտիզային ձևերի մոտ խնդիրը բոլորովին այլ է, քանի որ այս դեպքում շատ քիչ տոկոսն է բազմանում սերմնային ճանապարհով, մեծամասամբ սերմերը ծլունակ չեն, շատերի մոտ էլ դիտվում է ճեղքում:

Ցանքսի աշխատանքները կատարվել են երկու ժամկետով՝ գարնանային (4-7/IV) և աշնանային (25-30/X): Ելնելով պարտիզային ձևերի առանձնահատկություններից սերմերի ցանքից մինչև ծլարձակում, (առաջին ծիլերի դուրս գալը) կարող է տևել մի քանի օրից մինչև մի քանի ամիս: Սերմերի ծլունակությունը պահպանվում է մինչև երկու տարի: Օրինակ, *Tillia platyphyllos* "Laciniata"-ի և ասեղնատերևավոր որոշ տեսակների մոտ սերմերը ծլել են երկրորդ տարում: Համեմատաբար բարձր ծլունակությամբ աչքի են ընկել հետևյալ պարտիզային ձևերը՝ *Thuja occidentalis* "Filiformis", *Berberis thunbergii* "Babette", *B. thunbergii* "Green Carpet", *Deutsia scabra* "Plena", *Pyracantha coccinea* "Orange Glow", *Hibiscus syriacus* "Monstrosus", *H. syriacus* "Totus-albus" և այլն, միջին ծլունակությամբ հետևյալները՝ *Thuja occidentalis* "Pendula", *Th. occidentalis* "Yellow Ribbon", *Taxus baccata* "Aureovarigata", *Juniperus communis* "Pendula", *Viburnum opulus* "Xantocarpum" և այլն: Իսկ ցածր ծլունակություն են ցուցաբերել հետևյալ պարտիզային ձևերը՝ *Thuja occidentalis* "Dumosa", *Taxus baccata* "Erecta Adpressa", *Chaenomeles speciosa* "Semperflorens", *Tillia platyphyllos* "Laciniata", *Pyracantha coccinea* "Soleil d'or", *Exochorda racemosa* "Grandiflora" և այլն: Չծլած սերմերի քանակը շատ ավելի մեծ է, քան վերը թվարկվածներինը (*Taxus baccata* "Elegantissima", *T. baccata* "Fastigiata", *Juniperus chinensis* "Monarch", *Thuja occidentalis* "Aureospicata", *Chaenomeles superba* "Nicoline", *Viburnum lantana* "Aurea", *V. opulus* "Variegatum" և այլն):

Ադ. 1-ից երևում է, որ պարտիզային ձևերի մեծ մասի ծլունակության տոկոսը ցածր է, շատերի սերմերը կենսունակ չեն:

Պարտիզային ձևերն ավելի արդյունավետ բազմանում են վեգետատիվ ճանապարհով՝ կտրոններով, պատվաստով: Վեգետատիվ բազմացման առավելությունն այն է, որ պահպանվում են մայր բույսի բոլոր գեղագարդ հատկանիշները, և ճեղքում տեղի չի ունենում:

Լայնատերևավորների գարնանային կտրոնները վերցվել են մայր բույսերի նախորդ տարվա ընձյուղից՝ հենց կտրոնավորման օրը, որոնցից կտրվել են 8-10 սմ երկարության կտրոններ՝ երկու, երեք հանգույցներով և տերևներով:

Աղյուսակ 1. Ներմուծված պարտիզային ձևերի սերմնային բազմացման արդյունքները

	Պարտիզային ձև	Սերմնային ձեռքբերման երկիրը	Ցանցի ժամկետը	% մշակութայինություն
Հ/Հ	1	2	3	4
1	<i>Acer platanoides "Stollii"</i>	Հունգարիա	4-7/IV	-
2	<i>Aesculus hippocastanum "Nana"</i>	Գերմանիա	4-7/IV	10-20
3	<i>Alnus incana "Aurea"</i>	Ռուսաստան	4-7/IV	10-20
4	<i>A. incana "Gold Fountain"</i>	Սլովակիա	4-7/IV	10-20
5	<i>Berberis thunbergii "Babette"</i>	Լատվիա	4-7/IV	70-80
6	<i>B. thunbergii "Dart's Red Laddy"</i>	Էստոնիա	4-7/IV	10-20
7	<i>B. thunbergii "Green Carpet"</i>	Լատվիա	4-7/IV	80-90
8	<i>B. thunbergii "Orang Rocket"</i>	Լատվիա	4-7/IV	50-60
9	<i>B. thunbergii "Powwow"</i>	Լատվիա	4-7/IV	-
10	<i>Betula pendula "Oycoviensis"</i>	ԱՄՆ	4-7/IV	-
11	<i>Catalpa bignonioides "Aurea"</i>	Վրաստան	4-7/IV	-
12	<i>Chaenomeles speciosa "Semperflorens"</i>	Գերմանիա	4-7/IV	10-20
13	<i>Ch. superba "Nicoline"</i>	Վրաստան	25-30/X	-
14	<i>Cotinus coggygria "Purpureus"</i>	Լիտվա	4-7/IV	10-20
15	<i>Crataegus monogyna "Variegata"</i>	Ռուսաստան	4-7/IV	-
16	<i>Deutsia scabra "Plena"</i>	Ռումինիա	4-7/IV	70-80
17	<i>D. scabra "Siboldi"</i>	Ռումինիա	4-7/IV	70-80
18	<i>Euonymus japonicus "Macrophyllus"</i>		25-30/X	-
19	<i>Exochorda racemosa "Grandiflora"</i>	Հոլանդիա	4-7/IV	10-20
20	<i>Forsythia intermedia "Beatrix Farrand"</i>	Լիտվա	4-7/IV	10-20
21	<i>F. intermedia "Helios"</i>	Լիտվա	4-7/IV	10-20
22	<i>F. intermedia "Karl Sax"</i>	Լիտվա	4-7/IV	10-20
23	<i>Hibiscus syriacus "Hamabo"</i>	Գերմանիա	4-7/IV	20-30
24	<i>H. syriacus "Monstrosus"</i>	Ավստրիա	4-7/IV	70-80
25	<i>H. syriacus "Totus-albus"</i>	Ավստրիա	4-7/IV	70-80
26	<i>Ilex opaca "Bountiful"</i>	ԱՄՆ	4-7/IV	-
27	<i>Juniperus chinensis "Ketelerii"</i>	Գերմանիա	4-7/IV	-
28	<i>J. chinensis "Ketelerii"</i>	Գերմանիա	4-7/IV	-
29	<i>J. chinensis "Leeana"</i>	Գերմանիա	4-7/IV	10-20
30	<i>J. chinensis "Monarch"</i>	Վրաստան	25-30/X	-
31	<i>J. communis "Pendula"</i>	Գերմանիա	4-7/IV	40-50
32	<i>J. virginiana "Pseudocupressus"</i>	Գերմանիա	4-7/IV	-
33	<i>J. virginiana "Glauc"</i>	Վրաստան	4-7/IV	-
34	<i>J. virginiana "Pseudocupressus"</i>	Գերմանիա	4-7/IV	-
35	<i>Parthenocissus tricuspidata "Veitchii"</i>	ԱՄՆ	4-7/IV	-
36	<i>Physocarpus opulifolius "Diabolo"</i>	Ռուսաստան	4-7/IV	20-30
37	<i>Ph. opulifolius "Luteus"</i>	Գերմանիա	4-7/IV	50-60
38	<i>Pyracantha coccinea "Orange Glow"</i>	Վրաստան	25-30/X	70-80
39	<i>P. coccinea "Soleil d'or"</i>	Վրաստան	25-30/X	10-20
40	<i>Rhododendron canadense "Alba"</i>	Լիտվա	4-7/IV	-
41	<i>Rh. caucasicum "Roseum"</i>	Լիտվա	4-7/IV	-
42	<i>Sambucus nigra "Laciniata Nana"</i>	Իտալիա	4-7/IV	10-20
43	<i>Taxus baccata "Elegantissima"</i>	Վրաստան	25-30/X	-
44	<i>T. baccata "Aureovariegata"</i>	Լատվիա	4-7/IV	40-50
45	<i>T. baccata "Erecta Adpressa"</i>	Լատվիա	4-7/IV	20-30
46	<i>T. baccata "Fastigiata"</i>	Վրաստան	25-30/X	-

Հ/Հ	1	2	3	4
47	<i>T. baccata "Imperialis"</i>	Գերմանիա	4-7/IV	50-60
48	<i>T. baccata "Linearis"</i>	Գերմանիա	4-7/IV	10-20
49	<i>T. baccata "Nissen's President"</i>	Լատվիա	4-7/IV	10-20
50	<i>T. baccata "Overeynderi"</i>	Հունգարիա	4-7/IV	10-20
51	<i>T. baccata "Semperaurea"</i>	Լատվիա	4-7/IV	20-30
52	<i>T. x media "Hicksii"</i>	Ռուսաստան	4-7/IV	-
53	<i>Thuja occidentalis "Filiformis"</i>	Լատվիա	4-7/IV	70-90
54	<i>Th. occidentalis "Dumosa"</i>	Լատվիա	4-7/IV	10-20
55	<i>Th. occidentalis "Malonyana"</i>	Ռուսաստան	4-7/IV	-
56	<i>Th. occidentalis "Pendula"</i>	Գերմանիա	4-7/IV	50-60
57	<i>Th. occidentalis "Spiralis"</i>	Վրաստան	4-7/IV	-
58	<i>Th. occidentalis "Yellow Ribbon"</i>	Լատվիա	4-7/IV	40-50
59	<i>Tilia platyphyllos scop. "Laciniata"</i>	Գերմանիա	4-7/IV	30-40
60	<i>Ulmus parvifolia "Dynasty"</i>	ԱՄՆ	4-7/IV	-
61	<i>Viburnum carlesii "Compactum"</i>	ԱՄՆ	4-7/IV	-
62	<i>V. lantana "Aurea"</i>	Ռուսաստան	4-7/IV	-
63	<i>V. lantana "Variegatum"</i>	Ռուսաստան	4-7/IV	-
64	<i>V. opulus "Variegatum"</i>	Ռուսաստան	4-7/IV	-
65	<i>V. opulus "Xantocarpum"</i>	Լիտվա	4-7/IV	40-50

Ստորին մեկ կամ երկու տերևը հեռացվում է: Կտրոնավորումը կատարվել է վաղ գարնանը՝ մինչև բույսերի հյութաշարժը:

Անեղնատերևավորների կանաչ կտրոնները վերցվել են 2-3 տարեկան կողային ընձյուղներից: Դրանք կտրվել են ոչ թե մկրատի օգնությամբ, այլ ձեռքի՝ պոկելով այնպես, որ բնափայտի կեղևի մի փոքր մասն էլ հետը լինի:

Վերցված կտրոնների հյուսվածքների առավելագույն խոնավացման համար դրանց 1/2-1/3 մասը 18-24 ժամ տևողությամբ պահվել են ջրի կամ կալիումի պերմանգանատի բաց վարդագույն լուծույթի մեջ, որից հետո տեղափոխվել սառը միջավայր և պահվել խոնավ ավազի մեջ: Արմատային հյուսվածքների ձևավորվելուց հետո բուսակը տեղափոխվել է հողի մեջ [6]:

Առավել մեծ կիրառություն ունի ձմեռային կտրոնավորումը, որի ժամանակ օգտագործվում են միամյա (երկամյա), երբեմն նաև բազմամյա ընձյուղները (աղ. 2):

Որոշ պարտիզային ձևեր բազմացվել են պատվաստի միջոցով: Պատվաստի բազմաթիվ ձևերից մեր կողմից օգտագործվել է կտրոնապատվաստը: Պատվաստի ցանկացած մեթոդի կիրառման դեպքում ստացված արդյունքը հիմնականում պայմանավորված է պատվաստացուի և պատվաստակալի կենսաբանական առանձնահատկություններով, հասակով, մորֆոլոգիական կառուցվածքով, ֆիզիոլոգիական կազմով, ինչպես նաև այն նպատակով և խնդրով, որոնք մեր առջև դրել ենք: Կարող է մի դեպքում լինել շատ արդյունավետ, իսկ մեկ այլ դեպքում՝ ընդհակառակը: Օրինակ, պտղատու տեսակների դեպքում առավել տարածված և նպատակահարմար մեթոդ է աչքապատվաստը: Գեղազարդ լայնատերև ծառաբույսերի մեծամասնության հատկապես գնդաձև, հովանոցաձև, լացող, բրգաձև և այլ յուրահատուկ սաղարթի ձև ունեցողների դեպքում աչքապատվաստը, անկախ գոհացնող տոկոսից, դժվար թե կարելի է համարել արդյունավետ եղանակ:

Ներկայիս ժամանակներում պատվաստի արդյունավետության հնարավորությունը բարձրացնելու համար սկսել են օգտագործել ֆիզիոլոգիական ակտիվ նյութեր (ՖԱՆ), որոնք խթանում են վերականգնման գործընթացը, երբ ՖԱՆ-ը բժշկական ներարկիչի միջոցով ներարկվում է միաձուլման գոտի: Արագացնելով վերականգնման գործընթացը, որպես պատվաստացու հնարավոր է օգտագործել ոչ միայն մեկ բողբոջը, ինչպես աչքապատվաստի դեպքում, այլ նաև տարեկան ընձյուղի մի մասը՝ 2-4 բողբոջով, իսկ ճյուղապատվաստի դեպքում՝ ընձյուղն ամբողջությամբ կամ մայր բույսի երկու, երեք և ավելի տարեկան հատվածները [7]:

Աղյուսակ 2. Պարտիզային ձևերի փայտացած կտրոններով բազմացման արդյունքները

	Պարտիզային ձև	Սերմանյութի ձեռքբերման երկիրը	Ցանցի ժամկետը	Ծլունակությունը, %
Հ/Հ	1	2	3	4
8	<i>Berberis vulgaris</i> "Atropurpurea"	1	III- IV	70-80
7	<i>Biota orientalis</i> "Globosa"	2-3	IV-V	80-90
15	<i>Buxus sempervirens</i> "Aureo-variegata"	3-4	III- IV	70-80
Հ/Հ	1	2	3	4
16	<i>B. sempervirens</i> "Rotundifolia"	3-4	III- IV	60-70
11	<i>Cornus alba</i> "Argenteo-marginata"	1	III- IV	80-90
1	<i>Juniperus chinensis</i> "Variegata"	2-3	IV-V	80-90
2	<i>J. communis</i> "Hibernica"	2-3	IV-V	80-90
3	<i>J. sabina</i> "Cupressifolia"	2-3	IV-V	80-90
4	<i>J. sabina</i> "Spicata-aurea"	2-3	IV-V	80-90
9	<i>Sambucus nigra</i> "Albo-variegata"	1	III- IV	80-90
10	<i>S. nigra</i> "Laciniata"	1	III- IV	70-80
14	<i>Spiraea japonica</i> "Little Princess"	1	III- IV	80-90
5	<i>Thuja occidentalis</i> "Fastigiata"	2-3	IV-V	80-90
6	<i>Th. occidentalis</i> "Aurea"	2-3	IV-V	80-90
13	<i>Viburnum opulus</i> "Roseum"	1	III- IV	80-90
12	<i>Weigela florida</i> "Variegata"	1	III- IV	70-80

Որպես պատվաստանյութ օգտագործվել են ոչ մեծ չափի հանգստի շրջանում գտնվող կտրոններ՝ 1-5 բողբոջներով:

Կատարված փորձերի և ստացված արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ պարտիզային ձևերն ավելի արդյունավետ է բազմացնել վեգետատիվ ճանապարհով, քանի որ այդ դեպքում կտրոնների արմատակալումը բարձր է, տատանվում է 60-90 %-ի սահմաններում: Սերմերի ծլունակության ցուցանիշները շատ ավելի ցածր են՝ 10-90 %, շատ դեպքերում էլ բոլորովին բացակայում են:

Նոր գեղազարդ պարտիզային ձևերի ներմուծման, բազմացման աշխատանքները շարունակվում են, և ստացված նոր արդյունքները կամփոփվեն մեր հետագա աշխատանքներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Արծ.Ա. Գեղազարդ պարտիզագործություն, ՀՊԱՀ, Երևան, 276 էջ, 2010:
2. Գրիգորյան Մ.Մ. Ծառաբույսերի պարտիզային ձևերը Հայաստանի բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում, ՏԲուսաբանական գիտությունը ժամանակակից աշխարհում» Երևան, էջ 291-295, 2015:
3. Վարդանյան Ժ.Հ. Ծառաբույսերի աճեցման և գեղազարդ տնկարկների ստեղծման առանձնահատկությունները Հայաստանում, Եր., 208 էջ, 2020:
4. Вардамян Ж.А. Научные основы интродукции древесных растений в Армении. Ереван, 400 с., 2012.
5. Вардамян Ж.А., Григорян А.А., Тарханян З.Т., Гишян Г.Г. Садовые формы древесных растений и перспективы их использования в зеленых насаждениях Еревана. Матер. между. науч. конф. "Актуальные проблемы ботаники в Армении", Ереван, с. 344-348, 2008.

6. *Варданян Ж.А., Манасян Г.Г., Гатрчян Г.М., Григорян Г.А.* Особенности размножения некоторых декоративных древесных растений. Изв. Гос. Аграрн. Унив. Армении, 1, с. 20-25, 2011.
7. *Кръстев М.Т., Бондорина И.А., Протас С.А.* Биологические основы прививки древесных растений при интродукции. М., с. 164, 2014.
8. *Хачатрян Л.А.* О создании коллекции культиваров в Ереванском ботаническом саду. Тез. док. XXIV сессии совета бот. садов Закавказья, Тбилиси, с. 82-83, 1990.
9. *Kotarov I.A.* Vegetative reproduction of arboreal plants and its importance for introduction. Biology of woody plants, Slovak., p. 321-327, 1973.

Ստացվել է 13.11.2020